

1726—9ի միջոցին էջմիածնի կարապետ կաթողիկոսէն Եպիսկոպոս ձեռնադրուած է, եւ 1766ին Հոկտեմբերին Զմիւռնիոյ Ճամբով վենետիկ հասած է (Թուղթ Տէր Եստուածատուր Զուղայեցւոյ 25 Հոկտ. 1766 ի վննետ. տո Հ. Գր. Նէփօթ ի Հոռմ, Գիւ. Անտ.): Սիմոն Եպ. վախճանած է 76 տարեկան եւ Հոռմայ Ս. Մարիամ Եգիպտացի Եկեղեցւոյն մէջ թաղուած է: Տապանագրին օրինակն է հետեւեալը.

ԼԷՌՆԱՐԴԵԱՆ ԱՆԴՌՆԷԼԼԻՆ ԻՇԽԱՆ ԱԶԳԻՆ
ՀԱՅՈՑ ԵՏ ԿԱԶՄԵԼ ԶԱՐԶԱՆՍ

ՏԱՊԱՆ ՇԻՐԱՄԷ ՈՒՄՈՒՏԵԱՆ Գ ԳԱՏԱՑԻՈՅ
ՍԻՄԷՕՆ ԳԻՏԱՊԵՏԻՆ ՔԱԶ ԲԱՐՈՒՆԻՈՅ
ՈՐ ՄԻՇՏ ԵՂԵՒ ՆԽՆԶՅՈՑԶ ՍԲ ՀԱՒԱՏՈՅ
ԲԱՆԻՒ ԳՈՐԾՈՎ ՆՄԱՆ ՀՈՎՈՒԱՅ ՏՆ ՄԵՐՈՅ
Ի ՅԱՔՍՈՐԱՆՍ ԱՌԱՔԵՑԱՒ Ի ՀԵՐԶԵԼՈՅ
ԵՒ Ի ԲԱՆՏԻ ՇՂԹԱՅԵՑԱՒ ՀԱՆԳՈՅՆ ԳՈՂՈՅ
ՆԱԵՒ Ի ԹԻՍ ԴՏՊՐՏԵԼ ԸՆԴ ԳԵՐԵԼՈՅ
ՎՍ ՈՒՂՂ ՍԲ ՀԱՒԱՏՈՅՆ

ՀՌՕՄԱՅԵՑԻՈՅ Ի ՎԻՃԱԿԷՆ ՏԱՐԱՇԽԱՐՀԻԿ
ՎՏԱՐԵՑԱՒ

ԱՅՍ ԲԱԶՈՒՄՍ Ի ԲԻԶԱՆԴԻԱ ՀԱՆԴԻՊԵՑԱՒ
ԱՊԷ Ի ՅՈՒԽՏ ԵԿՆ Ի ՀՌՕՄ ԲՆԱԿԷՑԱՒ
ՇՆՈՐՀՍ ԳՏԵԼԼ ԱՍՏ ԶԵՌՆԱԴԻՐԶ ՍԱՀՄԱՆ
ՆԵՑԱՒ

ԵՕԹՆ ՏԱՐԻ ՅՕԹԵՎԱՆՍ ԲՆԱԿԷՑԱՒ
ԼՅԵԼԼ ԱՌՈՐԲԻ ԳՈՎԵԼԼ ՎԱՐՈՒՔ Ի ՏԷՐ
ՀԱՆԴԵԱՒ

ԵՕԹՆ ՏԱՍԱՄԲ ՎԵՑ ԱՒԵԼԻ ԼԻ ՀԱՍԱԿԱՒ
ԱՄԻ ՓՐԿԶԻՆ ՈՐ Ի ՎԻՄԻՍ ՓՈՐԱԳՐԵՑԱՒ

1774 ՅՈՒՆԻՍԻ 3

Ունիմ Ումուտեան Եպ.ին կնիքն ու պատկերը, զոր ուրիշ առթիւ կը հրատարակեմ: